

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Զավեն աբեղա Խաչատրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսում՝ «Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն են հաւատքն ձեր. եւ տակաւին ի նմին մեղս կայցէք» (Ա Կորնթացիս ԺԶ 17) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նոյեմբերի 6-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Նոյեմբերի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Եղրաս աբեղա Ներսիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսում՝ «Իւրաքանչիւր յոր կոչումն կոչեցաւ, եղբարք, ի նմին կացցէ առաջի Աստուծոյ» (Ա Կորնթացիս Է 24) բնաբանով (տես «Էջմիածին», 1985, ԺԱ—ԺԲ, էջ 58):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նոյեմբերի 13-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Նոյեմբերի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում Տ. Սասուն աբեղա Զմրուխտյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսում՝ «Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո» (Սաղմոս Ծ 17) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նոյեմբերի 19-ին, երեքշաբթի.—Այսօր Ճապոնիայի Սինթոեիստական նավթի ընկերության տեսուչ պրն. Պակախասի Խիսոսի

Կիայիկիտոն և իր օգնականը այցելեցին Վեհարան և Նորին Սրբության հետ զրույց ունեցան միջազգային խաղաղության մասին:

Հյուրերը եղան Վեհարանի պատկերասրահում և «Գանձատանը»:

*
* *

Նոյեմբերի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Նույն օրը ՍՍՀՄ-ում լեհ-սովետական եղբայրության ընկերության նախագահության գլխավոր մարմին «Փշիակն» թերթի մշտական թղթակից պրն. Յան Ցիխոցկին Վեհարանի դիվանատանը հանդիպում ունեցավ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոկապալյանի հետ:

Սրբազան հոր ուղեկցությամբ հյուրը այցելեց Վեհարանի պատկերասրահ և «Գանձատուն»:

*
* *

Նոյեմբերի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսում՝ «Այր դու, ո՞ կացոյց զիս դատաւոր կամ բաժանարար ի վերայ ձեր» (Ղուկաս ԺԲ 14) բնաբանով:

*
* *

Նոյեմբերի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Նոյեմբերի 30-ին, շաբաթ.—Տօն Սրբոց Առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթուղիմէոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մաշտոց աբեղա Խաչիկյանը:

*
* *

Դեկտեմբերի 1-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Եկ կեր ուրախութեամբ զհաց քո և արբ սրտիւ զուարճացելով զգինի քո, զի արդէն իսկ հաճեցաւ Աստուած ի գործս քո» (Ժող. Թ 7) բնաբանով (տես «Էջմիածին», 1985, ԺԱ—ԺԲ, էջ 56):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 4-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Յոր եւ աղօթս առնեմք վասն ձեր յամենայն ժամ, զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն ձերում Աստուած» (Բ Թեսաղ. Ա 11) բնաբանով:

Պատարագիչ հայր սուրբը իր քարոզի ընթացքում խոսեց Պողոս առաքյալի կոչման և թեսաղոնիկեցիների հետ նրա կապի մասին, ապա ցույց տվեց Պողոս առաքյալի անձնական նամակի՝ քրիստոնյաների համար ուղեցույց հանդիսացող գաղափարները: «Կոչման գիտակցությունը պարզապես անունին հետևել չէ, այլ ավելի հիմնական մի իրողություն. ճիշտ է՝ քրիստոնյա ենք լինում մկրտվելով, սակայն քրիստոնյա մնալու արժանի ենք մեր խոսքով և հավատքով, մեր ամբողջ գործունեությամբ և կյանքով»:

Ս. պատարագի ընթացքում Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը Սահակ կիսասարկավագին շնորհեց սարկավագական աստիճան:

*
* *

Դեկտեմբերի 11-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 15-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Հովնան վրդ.

Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Եթէ կոյրք էիք, ոչ էր ձեր մեղ. բայց արդ ասէք եթէ Տեսանեմք, եւ մեղքն ձեր ի ձեզ հաստատեալ են» (Հովհաննես Թ 41) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 18-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն աբեղա Խաչատրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Աստուած, քաւեա՛ վիս վմեղաւորս» (Ղուկաս ԺԸ 13) բնաբանով:

*
* *

Դեկտեմբերի 24-ին, երեքշաբթի.—Տօն Սրբոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին.

Այսօր Մայր տաճարում, Ս. Ստեփանոսի խորանի վրա, նախավկայի մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Տ. Պսակ աբեղա Կարապետյանը և հավուր պատշաճի ոգեշունչ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի Մայր Աթոռի և Արարատյան թեմի սարկավագաց դասը, գլխավորությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի և Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանի, առաջնորդվեց Վեհարան, որտեղ Նորին Սրբությունը շնորհավորելով և օրհնությունները բաշխելով սարկավագներին՝ իր խոսքում վեր հանեց Ս. Ստեփանոսի անձնազոհության ու սրբության գաղափարները և այդ օրինակելի նվիրումի արդիական անհրաժեշտությունը:

*
* *

Դեկտեմբերի 25-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ ամավերջի միաբանական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 29-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մաշտոց աբեղա Խաչիկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Որ ունիցի՝ տացի. եւ յայնմանէ որ ոչն ունիցի, եւ զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ» (Ղուկաս ԺԹ 26) բնաբանով: